

Փոխվարչապետը ԵՆ Արագածոտնի մարզպետը այցելեցին Արագածի ԵՆ Աշտարակի տարածաշրջաններ

Սեպտեմբերի 3-ին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանն այսօր այցելեց Արագածոտնի մարզ: Փոխվարչապետը նախ եղավ Ճաղկահովիտ համայնքում, մարզպետ Սարգիս Սահակյանի, համայնքապետի ԵՆ Քաղաքաշինության նախարարության պատասխանատուների ուղեկցությամբ ծանոթացավ պետական բյուջեի միջոցներով վերակառուցված բազմաբնակարան շենքի պայմաններին:

Պետբյուջեից հատկացված 676 մլն դրամով համայնքում վերակառուցվել է Շիրակացի փողոցի թիվ 5 շենքը՝ երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով: Եւս 20 մլն դրամ հատկացվել է շենքի ջեռուցման եւ գազիֆիկացման համար:

Փոխվարչապետը տեղում պատասխանատուների հետ քննարկեց շենքի տեխնիկական վիճակին, կատարված աշխատանքների որակին, բնակարանների բաշխմանը վերաբերող հարցեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ քննարկման ընթացքում ներկայացված նկատառումները հաշվի առնելով՝ Քաղաքաշինության նախարարությունը բնակարանների բաշխման վերաբերյալ համապատասխան առաջարկություններ կներկայացնի կառավարություն:

Փոխվարչապետն այնուհետեւ այցելեց Աշտարակ քաղաք, որտեղ ծանոթացավ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող "Համայնքային ջրամատակարարման ծրագրի" շրջանակում կատարվող աշխատանքների ընթացքին: Ծրագրի՝ "Աշտարակ քաղաքի եւ հարակից չորս գյուղերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցում" բաղադրիչով ջրամատակարարման համակարգերը բարելավվում են Աշտարակ, Օհանավան, Կարբի, Մուղնի եւ Սասունիկ համայնքներում: Պատասխանատուները տեղեկացրին, որ արդեն իրականացված է պայմանագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների մոտ 60 տոկոսը, իսկ Աշտարակ քաղաքում մոտ 50 տոկոսը: Քաղաքում կատարվում են պոմպակայանի վերակառուցման, ներթաղամասային ջրագծերի, անհատական տների համար մուտքագծերի կառուցման, ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքներ:

Փոխվարչապետը կարեւորեց աշխատանքների՝ որակով իրականացումը, պատասխանատուներին հորդորեց դրանք կազմակերպել այնպես, որպեսզի բնակիչների համար լրացուցիչ անհարմարություններ չստեղծվեն, ինչպես նաեւ մատակարարվող ջրի որակի հետ կապված խնդիրներ չառաջանան:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին